

ԱՅԲԻՆԱՐԱՆ առանց ուսուցչի կարգալ սովորելու
Համար, պատկերներով. յօրինեց Յ.
Տ. Միրաքեանց,
ԺՈՂՈՎՐԴԻ ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԻՒՆԸ, Նոյն Հեղի-
նակի.

Այս երկու տետրակներով պ. Տ. Միրաքեանցն
այն մարդկանց շարքն է կանգնում, որոնք կուզե-
նային ժողովրդեան մէջ գրագիտութիւն՝ լոյս տա-
րածել, յիշեցնելով այն առածը, թէ եթէ սարը ինքը
դէպի քեզ չի գալիս, դու գնա դէպի սարը, և ևրե-
մըն այսպիսի ցանկութիւնն իրագործելու փորձն
անգամ շատ համակրելի է և գովելի, Իսկապէս
գրախօսութիւնը այստեղ կարող էր վերջանալ և
մենք պէտք է վերջակէտ դնէինք:

Բայց հեղինակը ուրիշ գափնիների յետեւից է
ընկած. նա խօսում է յանուն հոգեբանութեան և
մանկավարժական կեդրոնի, և տալիս է մի նոր
տեսութիւն. Ընթերցողի առաջ մենք պարտական ենք
մնում, որ մի երկու խօսքով բացատրութիւն տանք
այս մասին:

Տողերիս գրողը խիստ նախապաշարուած է և
չի հաւատում «առանց ուսուցչի սովորելու» կամ
«երկու շաբաթի մէջ կարգալ-գրել սովորեցնելու»
կամ հեռու քաղաքից «նամակագրութեամբ լեզու
ուսուցանելու» խոստումներին: Դոքա փորձուած
են և միշտ—անյաջող: Ի դուր կարծում է պ. Տ.
Միրաքեանցը, թէ իւր «Թէօրիան» անծանօթ է,
նա յայտնի է իւր անակութեամբ: Յիշեցէք շա-
քարահացով թխած այրբեն գրերը՝ յիշեցէք «Fisch-
buch»-ների պարագաները, որոնք վերաբերու-
թիւն ունին ձեր թէօրիային. յիշեցէք Աւետարա-
նով օտար լեզու սովորելու առաջարկը—և ահա
այս բոլորից դուք անշուշտ կունենաք ձեր նոր քե-
րայի բաղադրիչ մասերը:

Պ. Տ. Միրաքեանի «Թէօրիան» շատ պարզ է.
նա ուզում է (բաւական մաքուր նկարած) պատ-
կերներով հասկացնել այս այս կամ այն ճառը, իսկ
ապա կարդացնել տալ նոյն համարակի իւր անգիր գիտե-
ցածները («Առաւօտ լուսոյ», «Հայր մեր»... «Հա-
րրրան», «Հաւար—Չուլոս»—այնպէս չէ՞, մեր հայ
քրիստոնէի համար, գրագիտութեան ծարաւողի
համար, այսպիսի զուգագրութիւնը շատ հրաշալի
պիտի լինի. . . .):

Մենք փորձեցինք գրքի պատկերները կարդացնել
մի համարակի. փորձի հետեանքները չտեղանուեղը
արձանագրեցինք, ինչպէս որ հեղինակն է արել, որ
և շտապում ենք պարոնին հաղորդել:

սմիլը (ա)	անուանեցին՝	մարակ (մ)
ուրագը (ու)	»	կացին (կ)
կասուն (կ)	»	շուն (շ)
լեզուն (ու)	»	սոկոն (ն)
օմը (օ)	»	թոկ (թ)
օշախը (օ)	»	եկեղեցի (ե)

կուցը (կ)	»	հաւի գլուխ (հ)
մոխը (մ)	»	մատներ (մ)
նշխար (ն)	»	խաչ (խ)
քաղը (թ)	»	յուրան (գրաժիմ—յի)
շեւիքը (շ)	»	սաղ (ս)
գուրգան (գ)	»	ոտը (ո)
լաղը (լ)	»	սար (ս)
ժայռը (ժ)	»	կառք (կ)
ժուլն (ժ)	»	դոնտիկի կոթ (զ)
բոռը (բ)	»	կրաւած (թ)
մանը (մ)	»	բղէզ (բ)
մրագը (մ)	»	ջրցան (յեշխայ—ջէ)
լիւնը (լ)	»	դեղձ (դ)
բնկուղը (բ)	»	ձմերուկ (ձ)
դուրը (դ)	»	շկալի (շ)
խաւոցը (ց)	»	ովջար (յաշոյն—րէ)
նուրը (ն)	»	ձուր բուն (ն)
պիւտը (պ)	»	արասի (ա)

Ուրեմն՝
ու դարձաւ՝ մ
ու » կ և ն
ու » դ և ն
լ » ե
օ » դ
և այլն: *

Հապա եթէ այսպիսի խառնձաղանձ գրագի-
տութեան ընտելացած համբալը ուզենայ տպած
գրքից կարգալ զոր օր. «առաւօտ լուսոյ» երկու
բառը՝ կարդացողը հարկաւ իւր նորահար բանալիով
այսպէս կարտաբերէ տեսած բառերը

(ա—ն—ա—ւ—օ—տ լ—ու—ս—ոյ)
մ—թ—մ—վ—ե—տ դ—կ—ս—ե

Նա ուրեմն «առաւօտ լուսոյ» կը կարգայ
«մթմվետ—դկսե», և և այդպէս կը կարգայ այն են-
թագրութեամբ, եթէ տառեր ճանաչելուց յետոյ՝
մի հրաշքով կարողութիւն կունենայ նաև գիր կապել,
որ պարոնի հոգեբանութեամբ աներկբայ պիտի լի-
նի. ??? Հետեւապէս մեր համարակի համար առաւօտ լու-
սոյ նոյն է, թէ «մթմվետ—դկսե», և այսպէս կը լինի
նորա ամբողջ գրագիտութիւնը. հիանալի թէօրիա
է, այնպէս չէ՞:

Մեր մթմվետ—դկսե—քեօրիայի յափշտակուող-
ները զարմանալի յամառութեամբ չեն ուզում
տեսնել, թէ Պոլոմբոսները արդէն գտել են Ամե-
րիկան, Բայց և այնպէս համոզմամբ կրկնում ենք,
թէ նոքա իրանց այնքան եւանդով՝ կարող էին մեծ
ծառայութիւն մատուցանել իրանց սիրած գործին:—

Երկրորդ տետրակի մասին չենք խօսում, որով-
հետև արդէն յայտնի է Մուրճ ամսագրից:

Ս. Ս.

* Ով որ գրքի պատկերները տեսնէ, նա չի զարմա-
նայ, որ համարակը մէկի անունը բոլորովին տարբեր անունով
է կոչել: Ուստի եւ մենք չենք ուզում երկարել, թէ այսպիսի
քնական շփոթութիւնները առաջ են գալիս ոչ թէ նկարի ան-
հաւաստիքով, այլ յօրինողի փոքր ինչ խառնակ հոգեբա-
նական հայեացքներից: